

**ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ. ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ, ԹԵ՞ ԱՆՁԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:
ՅԵՏՅԱՅԱՑՔ
30 ՏԱՐՎԱ ԴԵՌՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ***

Գրիգոր Բալասանյան

Բանալի բառեր՝ Արցախ, շարժում, Ադրբեջան, ինքնորոշում, հորհրդային Միություն, տարածքային անբողջականություն

1988թ. փետրվարի 20-ին Արցախի ժողովուրդը որոշում կայացրեց դուրս գալ Ադրբեջանական ԽՍՀ կազմից և վերամիավորվել մայր հայրենիքին: [1]

Որոշումն աննախադեպ էր խորհրդային իրականության պայմաններում և ծնեց բազմաթիվ տարակարծություններ: Արդյոք իրավաչափ էր այս որոշումը և այս պարագայում միջազգային իրավունքի որ սկզբունքը պետք է կիրառվեր՝ ազգերի ինքնորոշման, թե՛ տարածքային անբողջականության:

Փորձենք հետհայացք գցել և հասկանալ, թե իրականում որքանով են օրինական Ադրբեջանի այն պնդումները, թե արցախահայությունը իր որոշումը կայացրել է՝ խախտելով երկրի տարածքային անբողջականության սկզբունքը:

Պատմական աղբյուրների վկայությամբ արցախահայությունը իր հայրենիքում ապրում է առնվազն մի քանի հազարամյակ: Դրա վկայություններն են ոչ միայն պատմիչների աշխատությունները, այլև նախաքրիստոնեական և քրիստոնեական այն բազմաթիվ հուշարձանները, որոնցով այդքան հարուստ է Արցախի հողը:

Պետք է նշել, որ արցախահայության մոտ միշտ էլ բարձր է եղել պետական մտածողության մակարդակը: Պատմությունը ցույց է տալիս, որ բոլոր ժամանակներում, ցանկացած նվաճողների ենթակայության տակ ապրելիս Արցախի հայերը միշտ էլ կարողացել են պահպանել որոշակի կիսանկախ կարգավիճակ: Իրենց ռազմական զերազանց պատրաստվածության շնորհիվ նրանք ուղղակի ստիպել են նվաճողներին հաշվի նստել իրենց հետ: Ժամանակի ամենահզոր նվաճողներից մեկը՝ Նադիր շահը, ստիպված էր համապարզվել այն մտքի հետ, որ Արցախի Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի մելիքությունները միավորվեցին մեկ միավորի մեջ, որը կոչվեց Խամսայի մելիքություններ: Մելիքներն ունեին իրենց սեփական զինված ուժերը, համեմատաբար ինքնուրույն քաղաքականություն էին վարում: Այս միավորն անկասկած ուներ պետականության տարրեր և իրոք մեծ ձեռքբերում էր հզոր պարսկական տերության պայմաններում:

Յոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված իրադրության պայմաններում ևս արցախահայությունը պահպանեց իր ինքնուրույնությունը՝ հաճախ իր ըմբոստության համար վճարելով ծանր գին:

Լեռնային Ղարաբաղը բնակչությունը, որի 95 տոկոսը հայեր էին, գումարեցին իրենց առաջին համազումարը, որը Լեռնային Ղարաբաղը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց Ազգային խորհուրդ և կառավարություն: 1918-1920թթ. Լեռնային Ղարաբաղն ուներ պետականության բոլոր ատրիբուտները՝ ներառյալ բանակն ու օրինական իշխանությունները: Լեռնային Ղարաբաղի ժողովրդի խաղաղ նախաձեռնություններին ի պատասխան Ադրբեջանի Զանրապետությունը դիմեց ռազմական գործողությունների: 1918թ. մայիսից մինչև 1920թ. ապրիլը Ադրբեջանի և նրան սատարող Թուրքիայի զինված ստորաբաժանումները հայ ազգաբնակչության հանդեպ

* Հոդվածն ընդունվել է 25.11.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ պ.գ.թ., դոցենտ Վահրամ Պետրոսյանը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

իրագործեցին բռնություններ եւ ջարդեր (1920թ. մարտին միայն Շուշիում կոտորվեց շուրջ 10 հազար հայ, իսկ մնացածը տեղահանվեց շուրջ 40 հազար հայ): Սակայն, դրանով հնարավոր չեղավ պարտադրել Լեռնային Ղարաբաղի ժողովրդին ընդունելու Ադրբեջանի իշխանությունը: Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատումն ուղեկցվեց քաղաքական նոր կարգերի ստեղծմամբ: Լեռնային Ղարաբաղը որպես Ադրբեջանի և Հայաստանի միջև վիճելի տարածք է ճանաչվում նաև խորհրդային Ռուսաստանի կողմից: 1920թ. օգոստոսին խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված համաձայնագրով, ռուսական զորքերը ժամանակավորապես տեղակայվեցին Լեռնային Ղարաբաղում: [2]

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո, 1920թ. նոյեմբերի 30-ին, Ադրբեջանի Յեդկոմը իր հայտարարությամբ Ադրբեջանի կողմից նախկինում հավակնած տարածքները՝ Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը, ճանաչեց որպես Հայաստանի անբաժանելի մաս: [3]

Ի հարկե հետագայում քաղաքական որոշում կայացվեց Արցախը ԼՂԻՄ անունով խորհրդային Ադրբեջանի կազմում թողնելու մասին, սակայն փաստը մնում է փաստ, որ նույնիսկ այս պայմաններում, ի տարբերություն Ադրբեջանի կազմում գտնվող այլ ժողովուրդների, արցախահայությունը կարողացավ ձեռք բերել թեկուզ սահմանափակ, բայց այնուամենայնիվ որոշակի ինքնավար կարգավիճակ:

Այս փոքրիկ պատմական էքսկուրսը կատարվում է ցույց տալու համար, որ 1988թ. փետրվարի 20-ի որոշումը պատահական չէր: Այն կատարվեց ժողովուրդների ինքնորոշման սկզբունքին համապատասխան և որ ամենակարևորն էր ամբողջովին համապատասխանում էր խորհրդային Միության գործող սահմանադրությանը:

Ադրբեջանի անկախություն հռչակվելու պահին Արցախը իրավական առումով չէր գտնվում ապշերոնյան հանրապետության կազմի մեջ: Ավելին իրեն հռչակելով իբրև 1918-1920թթ. Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության իրավահաջորդ՝ ներկայիս ադրբեջանական դեկավարությունը իրեն դրել է բավականին ծանր դրության մեջ: Խնդիրը նրանում է, որ ադրբեջանական առաջին հանրապետության կազմում Արցախը չի եղել: Ավելին, նրա կազմում չի եղել նաև Նախիջևանի ինքնավար հանրապետությունը: Սրան հայկական երկու կողմերը պետք է շատ մեծ ուշադրություն դարձնեն և օգտագործեն բանակցային գործընթացի ժամանակ:

Բացի այդ 1991թ. հռչակելով իր անկախությունը, Ադրբեջանը չի նշել, թե հստակ որ սահմաններում է հայտարարում այն: Փաստացի ստացվում է, որ մեր արևելյան հարևանը իրեն համարում է Ադրբեջանի առաջին հանրապետության իրավահաջորդ, բայց պահանջում է ընդունել իր տարածքային ամբողջականությունը խորհրդային Միության ժամանակ գծված սահմաններով: Այս փաստը ևս կարևոր է բանակցային գործընթացում ամուր դիրքերից հանդես գալու համար:

1988թ. հայտնի որոշումից անցել է 30 տարի և կարծում ենք սա բավարար ժամանակահատված է հետհայացք գցելու և որոշակի գնահատականներ տալու համար:

Արցախահայությունը առաջինն էր, որ օգտվեց խորհրդային Միությունում հայտարարված խոսքի ազատության հնարավորությունից և հարց բարձրացրեց պատմական արդարության վերականգնման և Մայր Հայրենիքին վերամիավորվելու համար: Ու շեշտենք, որ դա արվեց գործող Սահմանադրության տառին և ոգուն համապատասխան:

Հաշվի առնելով Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությունը Արցախի հարցը հայտնվեց համաշխարհային խոշոր խաղացողների ուշադրության կենտրոնում:

Ի տարբերություն խորհրդային Միության տարածքում և մասնավորապես Հարավային Կովկասում ծագած այլ էթնիկ հակամարտությունների՝ Արցախի հակամարտության կարգավորման համար ստեղծվեց ԵԱՀԿ Մինսկի խումբը, որտեղ ընդգրկվեցին ԱՄՆ-ը, ՌԴ-ն և Ֆրանսիան: Մեկ այլ առումով նույնպես այս հակամարտությունը էապես տարբերվում է: Չնայած բազմաթիվ փորձերի միջազգային հանրությունը չկարողացավ

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

խաղաղապահ ստորաբաժանումներ տեղակայել շփման գծի երկայնքով և կողմերին հիմնականում հաջողվում է պահպանել status quo-ն: [4]

1988թ. և ս մեկ անգամ փաստեց, որ արցախահայությունը ամենևին չէր համակերպվել 1921թ. տխրահռչակ որոշման հետ և մի փոքր հնարավորության դեպքում կրկին բարձրացրեց անկախության հարցը: Նշենք, որ Խորհրդային Միության ժամանակ հայ մարշալները նույնպես որոշակի ջանքեր էին գործադրում արցախահայության հարցը Խորհրդային Միության ղեկավարության մոտ բարձրացնելու համար: Որոշ աղբյուրների համաձայն մարշալ Բաղդամյանն է այս հարցը բարձրացրել Միկոյանի հետ մասնավոր զորայգների ժամանակ, սակայն որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով հարցի քննարկումը հետաձգվել է:

Պատմությունը ցույց տվեց, որ շարժումն սկսվեց ճիշտ ժամանակին: Ներքին և արտաքին գործոնները վստահություն էին ներշնչում շարժման հաջողության հասնելու հարցում: Խորհրդային Միության նոր ղեկավարությունը որդեգրել էր խոսքի ազատության, ազատ կամաարտահայտման սկզբունքը: Թույլատրվում էին հանրահավաքները: Սա կատարվում էր մի նպատակով: Որպեսզի այսպես կոչված երկաթե վարագույրից այն կողմ ընդունեին, որ մարդու իրավունքների պաշտպանության հարցը Խորհրդային Միությունում այնքան էլ անմխթար վիճակում չէր, ինչպես կարծում էին Արևմուտքում: Իսկ Արևմուտքը իր հերթին գտել էր Խորհրդային Միությունը ներսից կազմաքանդելու ամենակարճ ճանապարհը՝ ազգային հարցի բարձրացումը և ազգային ազատագրական պայքարներին աջակցելը: Այս առումով դրսի աջակցությունը որոշ չափով ապահովված էր: Խնդիրը միայն ազգային ազատագրական պայքարը չէր: Դրված էր արցախահայության ֆիզիկական գոյության հարցը: 1988թ. Սումգայիթի և 1990թ. Բաքվի իրադարձությունները ցույց տվեցին, որ 70 տարի մեկ ընդհանուր պետության մեջ ապրելը ոչինչ չէր փոխել և ադրբեջանական ղեկավարությունը չէր հրաժարվել իր նախնիների ցեղասպան քաղաքականությունից: Իհարկե 1988թ. փետրվարի 20-ին այս ամենի մասին հնարավոր չէր պատկերացնել և մտածել, սակայն մեկ բան ակնհայտ է՝ շարժումը պետք էր սկսել և հայ ժողովրդի միասնական ջանքերի շնորհիվ այն պսակվեց հաջողությամբ:

Երբ փետրվարի 20-ին սկսվեց արցախյան շարժումը, հարևան երկրները նույնպես մեծ հետաքրքրությամբ և նույնիսկ տազնապով հետևում էին իրադարձություններին: Այդ երկրների շարքում առանձնանում էր Իրանը: Եվ քաղաքական, և տնտեսական, և մշակութային առումներով արցախյան հարցը մեծ հետաքրքրություն էր ներկայացնում Իրանի համար: Չմոռանանք, որ Արցախում պահպանվել են նաև իրանական մշակույթի տարրեր, և ի պատիվ արցախահայության, այդ մզկիթները ոչ միայն չեն ավերվել, այլև ակտիվորեն ընթանում են վերականգնողական աշխատանքներ:

Ամփոփելով նշենք, որ փետրվարյան շարժումը անկասկած ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառման փայլուն օրինակ էր և ի պատիվ մեր ժողովրդի՝ ծառայեց իր նպատակին: Այսօր մենք ունենք անկախ Արցախ, ինչը մեր ժողովրդի մեծագույն ձեռքբերումն է: Արցախը այսօր ունի անկախ պետություններին բնորոշ բոլոր չափորոշիչները՝ օրենսդիր և դատական իշխանություն: Եվ որ ամենակարևորն է այս ամենի երաշխավոր գինված ուժեր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. <http://www.nkr.am/hy/decision--of-the-special-session-of-the-nkao-council-of-peoples-deputies-of-xx-session/41/>
2. <http://www.mfa.am/hy/artsakh-issue/>
3. Չոհրաբյան Է.Ա. Նախիջևանյան հիմնահարցը 1920-1921թթ., Եր., 2010, էջ 225
4. Баласанян Г. Россия и США в процессе урегулирования конфликтов на Южном Кавказе, Мировое развитие. Выпуск 14, Вызовы для России в меняющемся мире. М., ИМЭМО РАН, 2015, стр. 109

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Արցախյան շարժում. ինքնորոշում, թե՞ անջատողականություն:
Չետիայացք 30 տարվա հեռավորությունից
Գրիգոր Բալասանյան

1988թ. փետրվարի 20-ին Արցախի ժողովուրդը որոշում կայացրեց դուրս գալ Ադրբեջանական ԽՍՀ կազմից և վերամիավորվել մայր հայրենիքին:

Որոշումն աննախադեպ էր խորհրդային իրականության պայմաններում և ծնեց բազմաթիվ տարակարծություններ: Արդյոք իրավաչափ էր այս որոշումը և այս պարագայում միջազգային իրավունքի նոր սկզբունքը պետք է կիրառվեր՝ ազգերի ինքնորոշման, թե՛ տարածքային ամբողջականության:

Ամփոփելով՝ նշենք, որ փետրվարյան շարժումն անկասկած ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառման փայլուն օրինակ էր և ի պատիվ մեր ժողովրդի, ծառայեց իր նպատակին: Այսօր մենք ունենք անկախ Արցախ, ինչը մեր ժողովրդի մեծագույն ձեռքբերումն է: Արցախը այսօր ունի անկախ պետություններին բնորոշ բոլոր չափորոշիչները՝ օրենսդիր և դատական իշխանություն: Եվ որ ամենակարևորն է՝ այս ամենի երաշխավոր զինված ուժեր:

РЕЗЮМЕ

Арцахское движение: самоопределение или сепаратизм?
взгляд из 30-летнего расстояния
Григор Баласанян

Ключевые слова: Арцах, движение, Азербайджан, самоопределение, Советский Союз, территориальная целостность.

20-го февраля 1988г. народ Арцаха принял решение выйти из состава Азербайджанской ССР и присоединиться к родине. Решение было беспрецедентным в условиях Советской власти и породило множество разногласий. Было ли это решение правомерным и в этом случае какой принцип международного права должен быть применен – территориальная целостность государства или право народа на самоопределение?

Обобщая, нужно сказать, что, без сомнения, арцахское движение – пример применения принципа о праве народов на самоопределение, и оно достигло своей цели. Сегодня мы имеем свободный Арцах, и это величайшее достижение нашего народа. Республика Арцах на сегодняшний день имеет все необходимые институты власти. И что самое главное – имеет вооруженные силы, которые являются гарантом независимости государства.

SUMMARY

Artsakh Movement: Self-Determination or Separatism: A View From 30 Years Distance
Grigor Balasanyan

Keywords: *Artsakh, movement, Azerbaijan, self-determination, Soviet Union, territorial integrity.*

On the 20th of February, 1988, the people of Artsakh made a decision to withdraw from the Azerbaijani USSR and to reunite with the motherland. The decision was unprecedented and put forward a lot of disagreements concerning its legal status, and if it was legal, which principle of international law must be used – the territorial integrity or the right to self-determination?

There is no doubt, that the Artsakh movement is an example of the right of the nation to self-determination, and it served its purpose. Today we have free Artsakh and it is the greatest achievement of our nation. The republic of Artsakh has all necessary institutes of government. It is very important to mention, that it has its armed forces, which guarantee the independence of Artsakh.